

հ.554436

06-05-2022թ.

Նախընտրած ծանուցման ձևը՝

Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒԶՅԱՆ*

ՀՀ քաղաքացի

Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0006, ՇԵՆԳԱԿԻԹ,*

ՍԱՆԹԱՇՅԱՆ Փ., 51, 6

uguiyanandranik@gmail.com : 37477446087

ԲՈՂՈՔ

Հարգելի Լոռու մարզպետարան.

Որպեսզի տեսնենք տեղեկատվությունը համայնքների կողմից անցկացվող աճուրդների մասին, պետք է այցելել, օրինակ՝ մարզպետարանի կայքերը (օր.՝ <http://lori.mtad.am/hoghajurd2019/>): Աճուրդների մասին տեղեկատվությունը շատ հաճախ չի պարունակում լուսանկարներ եւ իսկապես ամենա կարելիորը առցանց չեն անցկացվում: Աճուրդների մասին տեղեկատվությունը շատ հաճախ չի պարունակում լուսանկարներ եւ իսկապես ամենա կարելիորը առցանց չեն անցկացվում:

10.03.2022թ.-ի Կառավարության նիստի ժամանակ, ՀՀ վարչապետի կողմից ընդգծվել է, որ թվայնացման ամենակարեւոր գործառնություններից մեկը քաղաքացիների ժամանակը խնայելն է, որպեսզի քաղաքացին մի գործառնություն անելու համար ստիպված չլինի ամենատարբեր պետական մարմիններում շրջել, ժամանակ կորցնել, հերթեր կանգնել, այլ վիրտուալ տիրույթում իրեն հուզող հարցերի պատասխանը ստանալ եւ անհրաժեշտ գործառնություններ իրականացնել: Եվ հույս է հայտնել, որ թվայնացման գործընթացը կարագացնեք եւ հետեւողականորեն այս ուղղությամբ առաջ կշարժվեք: Բայց այն փաստը, որ 2022 թվականին՝ համայնքների կողմից անցկացվող աճուրդները առցանց չեն, ուղղակի ամոթալի եւ անհասկանալի է, քանի որ թափանցիկության հետ հարցադրումներ են առաջանում, ինչպես նաեւ ուղիղ հակասության մեջ է մտնում վարչապետի կողմից որդեգրած քաղաքականության եւ հանձնարարականների հետ:

Ենթադրում եմ՝ եթե հարցնես ինչու առցանց չի, կասեք աշխատանքներ տարվում են, եւ իսկապես այդ աշխատանքները մի ամբողջ հավեժություն կարելի է տանել բյուրոկրատիայի, ինչպես նաեւ հաշվի առնելով այս փաստը, որ պետական համակարգում միջին օդակի աշխատակիցները, խոչընդոտում են ՀՀ-ի զարգացումը՝ ըստ ԱՄՆ պետքարտուղարության գեկույցի:

ԴԱՀԿԾ-ն արդեն իսկ ունի ներդրված առցանց հարկադիր աճուրդների համակարգ (<http://harkadir.ajurd.am/hy/>), որը ուղղակի ավելի հարմար եւ թափանցիկ է, քան

համայնքների կողմից անցկացվող ոչ առցանց աճուրդները:

ԴԱՀԿԾ-ն նախարարությանը ենթակա, պետական կառույց է: Այսինքն՝ ԴԱՀԿԾ-ն կարող է իր հարկադիր աճուրդների առցանց համարգը (համակարգի կոդը) տրամադրի մարզպետարանին: Տրամադրել ինկատի ունենք՝ կամ ԴԱՀԿԾ-ն հնարավորություն է տալիս, որպեսզի մարզպետարանը հասանելիություն ունենա «GitHub» կամ «GitLab» կամ մեկ այլ հոսթինգում գտնվող ռեպոզիտորիային, որտեղ պահվում է կոդը, եթե իհարկե ԴԱՀԿԾ-ն օգտագործում է հոսթինգ: Հակառակ դեպքում ԴԱՀԿԾ-ն՝ իր հարկադիր աճուրդների առցանց համակարգի կոդը կարող է «ZIP» ֆայլով փոխանցել մարզպետարանին: Որից հետո, անհրաժեշտ է՝ կոդում ԴԱՀԿԾ-ի հետ կապված անվանումները փոխարենը մարզպետարանի համապատասխան անվանումներով եւ կատարել հարակից պահանջվող աշխատանքները: Այս ամենի համար կպահանջվի ամենաշատը մի քանի շաբաթ եւ ամենա միևնույն ֆինասական միջոցներ եւ այս փոփոխությունները կարող են կատարել օրինակ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կոմից, որը բաժնետերերի սեփականատերը ՀՀ-ն: Արդյունքում՝ մարզպետարանը նոր համակարգ չի հորինի, անիմաստ ժամանակ եւ ՀՀ հարկատուների միջոցներ չեն վատնի եւ ՀՀ քաղաքացիները հնարավորություն կունեն մասնակցել աճուրդներին թափանցիկ եւ հեշտ:

Ես արդեն իսկ, պաշտոնապես դիմել եմ ԴԱՀԿԾ, որպեսզի նսրանցից ստանամ պաշտոնական պատասխան, արդյո՞ք, ԴԱՀԿԾ-ն կարող է իր առցանց հարկադիր աճուրդների համակարգը (կոդը) տրամադրել մարզպետարանին, որպեսզի համայնքների կողմից անցկացվող աճուրդները լինեն առցանց, որը կապահովի թափանցիկությունը:

Հաշվի առնելով նաեւ «COVID-19» համավարակի բռնկումը, դրա հետ կապված առցանց համակարգերի զարգացման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ ՀՀ վարչապետի կողմից որդեգրված քաղաքականությունները՝ զարգացնելու ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների կիրառումը եւ հետշտացնելու քաղաքացիների կյանքը, ինչպես նաեւ համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետեւյալ կետերի մասին՝ հնարավորինս հստակ եւ ամբողջական ձեւակերպմամբ, ինչպես նաեւ, **որպես ծանուցման ձեւ ընտրել Էլ.փոստը.**

1. Անհապաղ պահանջում եմ, որպեսզի մարզպետարանը դիմի ԴԱՀԿԾ-ին եւ խնդրի, որպեսզի ԴԱՀԿԾ-ն իր առցանց հարկադիր աճուրդների համակարգը (կոդը) տրամադրել մարզպետարանին:
2. Անհապաղ պահանջում եմ, որպեսզի մարզպետարանը, ԴԱՀԿԾ-ի առցանց հարկադիր աճուրդների համակարգը (կոդը) ստանալուց հետո, անմիջապես սկսի համակարգի տեղայնացման աշխատանքները (օրինակ՝ որպես ներկայիս կայքի տեխնիկական սպասարկման մաս):
3. Անհապաղ պահանջում եմ, որպեսզի նշեք հստակ **ժամ, օր, ամիս եւ տարբիվ,** թե երբ հասանելի կլինի համայնքների կողմից անցկացվող աճուրդների առցանց համակարգը:

- Բողոքին արձագանքել հստակ՝ բոլոր կետերին անրադառնալով, լրոգված եւ

անհասկանալի, երկիմաստ պատասխաններ եւ անիմաստ հղումներ, որոնք հարցման մեջ նշված կետերի պատասխանները չեն պարունակում չնշել:

- **Տեղեկատվությունը տրամադրել էլեկտրոնային տարբերակով**, ՀՀ-ի քաղաքացիների հարկերից գոյացած պետական միջոցները չվատնել տեղեկատվությունը տպագրելու եւ փոստով ուղարկելու վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում գրավոր՝ հստակ ձեւակերպմամբ, համապատասխան օրենքների կամ որոշումների հղումներով, տեղյակ պահել մերժման հիմքի մասին եւ տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Իմ կողմից նախընտրած ծանուցման ձեւը՝ Էլ.փոստն է: Էլ.փոստի «Subject» բաժնում նշել համապատասխան «Subject»-ը, որտեղ կարտացուլվի կառույցի անվանումը եւ պարոունակող փաստաթղթի տեսակը (օրինակ՝ Լոռու մարզպետարան Ուղղված Բողոքի Պատասխան), ինչպես նաեւ՝ պատասխանը կցել «PDF» ձեւաչափով (անվորակ եւ ծուռմոռիկ սկանավորված փաստաթղթեր չուղարկել):

Դիմող՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԳՈՒՋՅԱՆ